նրանց հաստատությունների արժագանգ գտնելը, մանաւորապես հաստատելով նրանց օգնութեան հասցնելը։ Անցեալից խրատու�մբ. մինչոց տակը որ սովելոց կենտրոնական յանձնաժողովը չարունակելով իր գործունէութիւնը Հայաստանի բարօրութիւնը ապահովել։ Հայաստանը այն ժամանակ միայն նշանաւոր յաջողութեան շուրջ մէջ կը գտնուի երբ անտեսական և բարոյական զարգացումը զուգընթաց կը քայլեն։ Թող Միացեալ ընկերութիւնը լինի բարոյական մասը հոգացող, իսկ սովելոց յանձնաժողովը (այս անուան տակ գործելը Ցանկասանուում յաջողվելու ապահով միջոց է) նիւթական և անտեսական մասը. մինը հաց, մինը լոյս մատակարարէ։ Աշխատանքի բաժանումն էլ այս կը պահանջէ։ Ուստի մեր նուէրներին երկու հոսանք տակը գէպի այն տարբեր ուղղութեամբ գործող երկու մարմիններին, հաստատ համոզուած լինելով որ մեր նպատակները երկու կողմից էլ ապահով և ընդունակ ձեռքերի մէջ կը գործադրուին յօգուտ հայրենիքի վերածնելութեան։

Ներսէս Պատրիարքը, որի հեռատես քաջաքաղաքացիութիւնը ամենայն պարագայում ապացուցված է մեզ համար, այն յանձնաժողովի շարունակութիւնը անհրաժեշտ է համարում, և այս էլ հաստատվում է բազմաթիւ կոնդակներով և հրաւէրներով, որոնցով դիմում է առ ընդհանուր հայութիւն, յորդորելով ամեն կերպով օգնել յանձնաժողովի գործին։ Արդ վերոյիշեալ հանգամանքները աչքի առաջ ունենալով անվիճելի պէտք է լինի մեզ համար սովելոց յանձնաժողովի շարունակութեան հարցը։ Եթէ գոյութիւնը օգնելուց, մի և նոյն է լուծման վիճ. կայացնել, ըստ որում նրա գործունէութիւնը հայ ազգայինների առաջաւոր օժանդակութեան վրա է հիմնուած։

Կ. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Русскій Курьеръ» լրագրին հաղորդում են, որ Ակսակովի «Русь» լրագիրը շուտով ամենուրեայ թերթ կը դառնայ։ Մինչև այժմ նա շաբաթաթերթ էր։

—

«St. Petersb. Herold» լրագիրը ասում է թէ սուտ է որ Բիսակովի հայրը անձնասպանութիւն գործեց։ Նա կենդանի է և այս օրերս այցելեց իր որդուն քանտի մէջ։

—

«Порядокъ» լսել է որ զինուորների հագուստի և զինուորվելու ձևը նշանաւոր կերպով կը փոփոխվի։

—

Ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, լուր կայ, որ պատերազմական մինիստր Միլիւտինի տեղ կը նշանակվի Զրբուչեվ։

—

Ս. Պետերբուրգի հանքարանական դպրոցը «Գօրնի Ինստիտուտ», ինչպէս լսել է «Голосъ» լրագիրը, կը վերանորոգվի և խօսք կայ որ այդ դպրոցը Ս. Պետերբուրգից կը տեղափոխվի Ռուսաստանի ներքին գաւառներից մինը, ուր ուսանողներին աւելի դիւրին կը լինի պարապել գործնականապէս հանքային գիտութեամբ։

—

Մասնաւոր թատրոնների մէջ, ինչպէս լսել է «Новое Время» լրագիրը, ներկայացումները թոյլ կը տրվեն Զատկից յետոյ։

—

«Новости» լրագիրը որպէս լուր հաղորդում է որ եկող տարուց սկսած կառավարութիւնը այլ ևս պահելու չէ կայսերական թատրոնները, այլ այդ թատրոնները կը յանձնվեն մասնաւոր անձանց և մասնաւոր հիմնարկութիւններ կը դառնան։

—

Լսում ենք որ Ներքին տարվայ սեպտեմբեր ամսին հնագիտական ժողովը թիֆլիսում լինելու չէ, որովհետև սեպտեմբեր ամսին լինելու է թագաւոր կայսրի թագադրութիւնը։ Հնագիտական ժողովը լինելու է ձմռան ամենոյ ժամանակով։

—

Ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, Ս. Պետերբուրգում լուր է տարածված, որ դիտաւորութիւն կայ հաստատագրել գվարդիայի և արմիայի ծառայողական իրաւունքները և տարիքները։ Զանազանութիւնը կը լինի միայն ռազմիկների մէջ, ի նկատի առնելով որ գվարդիայում համազգեստը աւելի թանգ արժէ։ Բացի սորանից գվարդիայում աւելացրած կը լինի փոխ-գնդապետի (պոդպոլկովնիկի) տարիքը, իսկ արմիայից վերցրած կը լինի մայորի տարիքը։

—

«Моск. Вѣдом.» լրագիրը հաղորդում է որ Մոսկվայում նշանակված է ռուս երկաթուղիների գրութեան հետազօտութեան համար յանձնաժողով, որ շուտով կը բանայ իր նիստերը կոմս Բարանովի նախագահութեամբ։

—

«Մշակ» լրագիրը փոխառնակվում է այժմ 20 այլ և այլ թէ ռուսաց, թէ հայոց և թէ ֆրանսիական պարբերական հրատարակութիւնների հետ։

—

Մայրաքաղաքի ռուս լրագիրներից ասանք լսել են, որ իբր թէ պետական կանցլէր Իշխան Գորչակովի տեղ, որ արդէն խորին ծերութեանն է հասած, կը նշանակվի կոմս Վալուևի։

—

Բազմաթիւ ծառայող գործը Գրէգէրի, Հարվիցի և Լեգանի յանձն է առել պաշտպանել Ս. Պետերբուրգի նահանգական գատարանում երդուեալ հաստատուած Պապովիչ։ «Петербургск. Листокъ» լրագրի խօսքերին նայելով պաշտպանը մի միլիոն բուրլ վարձատրութիւն է պահանջել իր կլիէնտներից, որանք վերև յիշված գաղը սկսել են կառավարութեան դէմ։ Համաձայն պայմանին խոստացած վարձատրութեան կէսը, այն է 500,000 բուրլ պէտք է կանխիկ վճարվի պաշտպանին։

—

ԹԷԼԱԻԻՑ մեզ գրում են. «Բովանդակ գանվեցան մարդիկ, որոնք յանդգնում են հաստատել թէ «Մշակի» № 40 մէջ հաղորդած լուրը, որ մի 20 տարեկան երիտասարդ խեղդվել է տեղիս Զվեզ-Գալովանի սուրբ Գէորգ եկեղեցու անենագում, սուտ է, ևս պարտաւորութիւն եմ համարում պնդել և կրկնել, որ լուրը սուտ չէ։ Եւ կարող եմ, եթէ հարկն է, երիտասարդի անունն ու ազգանունն էլ յայտնել։ Ակդրնատաները Ս. և ֆ. են։ Նրան գտանի թագեցին և ուսումնասիրեանը երեխ յայտնի չեն բոլոր հանգամանքները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

—

Մարտի 1-ի եղեռնագործութիւնից յետոյ խնդիր յարուցվեցաւ թէ արդեօք իրաւունք ունեն եւրոպական մի քանի երկիրները ապաստանել իրանց մօտ ուրիշ երկիրների քաղաքական յանցաւորներին։ Երկու տեսակ քաղաքական յանցաւորներ կան. նախ այնպիսի քաղաքական յանցաւորներ, որոնք միայն խօսքով, գրով, պրոպագանդայով քաղաքական յանցաւորներ են. երկրորդ այնպիսիներ, որոնք այս կամ այն քրէական գործով մասնակցել են քաղաքական յանցանքին, այսինքն քաղաքական նպատակով մի որ և է բռնի գործ, սպանութեան փորձ են փոքնել և այլն։ Այս վերջինները խիստ ձանձրացուցիչ են ոչ թէ միայն որպէս քաղաքական յանցաւորներ, այլ որպէս քրէական յանցաւորներ։ Այս տեսակներին ամենապատմիա երկիրները յանձնում են օտար պետութիւններին։

Այժմ խնդիրը է յարուցվում արդեօք այն բոլոր ռուս ազատականները, որոնք ապրում են Շվէյցարիայում, Ֆրանսիայում, Անգլիայում կամ Խաղիայում,—նրանք կարող են արդեօք ռուս կառավարութեան պահանջման համեմատ յանձնված լինել Ռուսաստանին, եթէ նրանք միայն քաղաքական յանցաւորներ են, առանց մեղադրված լինելու քրէական մի որ և է յանցանքի մէջ։

Այժմ Աւստրիան, բայց մանաւանդ Գերմանիան աշխատում են մշակել մի նոր միջազգային օրէնք և առաջարկել այդ օրէնքը եւրոպական բոլոր պետութիւններին, որի գործածութեամբ իւրաքանչիւր պետութիւն իրաւունք կունենայ պահանջել մի ուրիշ պետութիւնից յանձնել իրան իր պահանջած քաղաքական յանցաւորին, որ իրան վնասգործ կերևայ։ Գերմանական պետական կանցլէր իշխան Բիսմարկ արդէն առաջարկել է այդ նոր օրէնքը գերմանական բոյսատագի քննութեանը։

Շվէյցարական լրագիրների մեծ մասը, բայց մանաւանդ „Zürcher Zeitg“ և „Basler Nachrichten“ ընդդէմ են այդ օրէնքի ընդունվելուն, ասելով, որ Շվէյցարիայի հանրապետական ոգուն դէմ է խախտել ապաստանի իրաւունքը։

Վիէննայի «Neue Freie Presse» լրագիրը ասում է. թող ապաստանը խախտվի միջազգային գաշնակցութեանը միանան եւրոպական այն պետութիւնները, որոնք փախնում են յեղափոխական շարժումներից, իսկ Աւստրիան փախնողաց պատճառ չունի որ ևէ յեղափոխութիւնից։

Ֆրանսիական „Republique Française“ լրագիրը այն միտքն է յայտնում, թէ երբ

հեռու մենք բաղդ չենք ունեցել լսելու նրա խոսակցութիւնը) դուրս գայ թէ նա այդպէս չէ խոսում, ինչպէս մենք ասացինք. այսինքն ինչպէս խոսում է այժմ ամեն մի հայ, այլ խոսում է այնպէս, ինչպէս գրել է, այն ժամանակ համարձակ կարելի է առաջարկել որ նա չը գրէ ինչպէս խոսում է, թէև այդ հակառակ է այն ընդհանրացրած մտքին՝ թէ մարդ պիտի գրէ այնպէս ինչպէս խոսում է. բայց ոչ, մենք չենք կարծում որ նա կարողանայ խոսել այն չնչին և անընդունակ ձևերով, որ գրել է. նա միայն խաղում է լեզուի հետ, գործ է ածում քէֆը ուզած բառերը և քերականական ձևերը։ Բերենք ուրիշ օրինակներ. «յետ լինելոյ զլուսաբարձրագոյն կարգաց ի ներքոյ ոտիցն Հաստատեցեալ ժողովոյն, նա նշանակուեցաւ նախարարն երկրին զորձոց» (երես 2), կարծես չէր կարելի ասել՝ բարձրագոյն ժողովի գլուխ (?) լինելուց յետոյ, նա նշանակվեցաւ ներքին գործերի նախարար։ Յետոյ՝ «նանցաւ և կէս տարի ի ժամանակէ հաստատուելն բարձրագոյն կարգադրիչ ժողովոյն» (ibid.). «ի կատար հասոյց» (ibid.). «ի բարձանէ ի ներքոյ» (եր. 11.) և այլն։

Ի՞նչ ստիպեց յիշեալ և գոյա նման շատ օրինակներում գործ ածել հին լեզուի ձևեր, քանի որ այժմեան գրականական լեզուն նոյն մտքերը արտայայտելու համար ունի պատրաստ, կենդանի և նոյն աստիճան կանոնաւոր ձևեր. քէֆ, կամայականութիւն։ Եթէ կամայականութիւն չէ, այլ մի հնաւէրի համոզմունք է՝ թէ հինը գերազանց է նորից, կամ դրա նման մի բան, ապա ինչու են յառաջ գալիս այն հակասութիւնները, այն խառնակութիւնը հին և նոր ձևերի, որանք ստատիկ ոգեղջնում են այդ պատկերներով զարդարված հանդէսը. մի տեղ կարդում ենք՝ «մեր նոր սերունդն զարմանալի յառաջադիմութիւններ է անում գիտութեանց և լեզուաց մէջ», մի քանի տող անցած արդէն՝ «Ղարին Բարձրութիւնն՝ պարսկերէն, անգրագիրն *) և հայերէն լեզուների վարժապետներին թանգագին շարեր է նուիրել» (եր. 13) մի յօդվածի սկզբում՝ «կոզմանէ», նոյն յօդուածի վերջում՝ «կոզմէ»։ (եր. 12) «փարոսի նախորդ հրատարակչէն» և մի և նոյն տեղումը մի քանի բառերից յետոյ՝ «թղթակցութիւնք Մոսկուայէ»։ Ղ. Գալչեանց և փարիզեցոց» (եր. 28 և այլն) մինչև անգամ՝ «ի աէրուութենէ», յետոյ՝ «նորա թագին մեզ ի ժառանգութիւն այդի. որ մշակուեցաւ ի նոցանէ շատ դարերի ընթացքում, մենք ժողովում ենք պատուզներ, որոց սերմերն առաջին անգամ ցանուեցան նոցանէ» (եր. 9). և զարմանալի չէ. մի անգամին տարածութիւն է բաժանում՝ ի նոցանէ և նոցանէ ի նոցանէ, այնպէս որ նոցանից գրելիս կարելի էր մոռանալ թէ ախար վերև ի նոցանէ էր գրված. գուցէ մենք սխալվում ենք. գուցէ «մշակուեցաւ» պահանջում է բացառական հոլովի հին ձևը, իսկ «ցանուեցաւ» նոյն հոլովի նոր ձևը. այդ էլ կարելի է. գոնեա պարան և տիկին Մաերեանների քերականութիւնը այնքան ապատատիա է, որ ոչինչ չէ արգելում. գուցէ կարող էք ասել՝ «փոփոխութիւնքն» (եր. 3). իսկ երկու երեք տողից յետոյ՝ «զժուարութիւնն ներն». գուցէ կարող էք գրել՝ «այդ հերքուքն աշխատութեան, այդ ուսումնականներն, այդ խուզարկուքն, հեղինակքն, փիլիսոփայքն, որք կատակեցին մեզ գիտութեան գանձեր և այլն (եր. 9). թող կայ. քանի էլ է հայերէն երեն էլ. մեկ տեղ կասենք «հեղինակք», երկու տողից յետոյ «օրինակներ», մի և նոյն տեղումը (եր. 14) «կանատաեաք. վարատարիչք» և «նահանգներ», «էջքեր», թեև չասենք «ի Մոսկուայ» և «Մոսկուայում», «ջանքին» (եր. 14) և «ջանից» (28). «կենարի» և կենաց» (9)։ իսկ բայերի վերաբերեալ՝ «լուծենք» և «ունիմք», պիտի հը. բատարակուի, «տապարեցան», «տապարեցաւ» և «փոխուեցան», «նշանակուեցաւ», «կը տապարուի» և այլն։

Բոլոր հակասութիւնները մի առ մի յիշելը կը նշանակէր «փարոսի» ամբողջ տետրակը արտագրել։

Վերև ասացինք թէ անտեղի փոխառութիւնները հին լեզուից երբեմն ժպիտ, իսկ աւելի յանախ ափսոսանք և զզվանք են յարուցանում. բացի վերև յիշած և գրանց նման անթիւ օրինակներից, ամենագունելի արխայիզմների շարքում գնելու է՝ «ազատեցին զ Թուրքաստանն», «զ Իս կարող չեն կատածել», «անկարելի է միա չը բերել զ հանեալ Բէրնարդէն զ Ալէն Փիլոսոփ խոսքերը» (այստեղ մեզ էլ անկարելի է միա չը բերել թէ, ինչպէս ասում են, Մոսեր Մագիստրոս Մոսիսեանը գրած է մի տեղ՝ «զ զ ի վերայ խաչի Քրիստոսն փառաբանեմք») նոյնպէս յիշելու է՝ որ. որ. որոյ. որոց (ի տեղի՝ որանք, որի, որոնց). Թուսիոյ, մատնի, մատնելու, հատանել, սկսանել, գատանել, մեռանել և այլն թէև տեղ տեղ, ազատութեան սկզբունքը չը մոռանալու համար, իրաւունք է համարվում գործ ածել խեղճ աշխարհարան՝ հասնել, գանել և այլն։ Իսկ ժպիտ է յառաջանում պ. ե. ա. հրատարակիչների այն երեխայական համոզմունքը՝ թէ վերնագիրները և տարբերագիրները պիտի գրաբար գրվեն. օրինակ՝ չէ կարելի ասել՝ «կը շարունակվի», այլ՝ շարունակեցի (եր. 11). Ցաթեայ վանքն ի հարաւայինս - արևելեան կողմանէ ի Սիւնեաց գաւառի», «ամամակառ հրարատարակիչն ի Փարիզէ», *) ազգ

*) Թէև վերև բերած օրինակից (թղթակցութիւնք.... Փարիզի ց) երևում է որ Փարիզի ց. անելն էլ կարելի է։

*) Ինչու ոչ «Անգղերէն». թող չենք ասում՝ ռուսերէն, թուրքերէն և այլն։

**) Թէև տեղ տեղ կայ Թուսիոյ, Անգղիոյ և այլն։